

Բահի երկու հարուածով նայիս առուն կը թեթե
 Օծածապուկ ձեւերով հեղուկ իրանս իր ոլոր:

Ջուրն անընդմեջ կը հոսի, ածուները կը լենան,
 Ու, դարձուցէ՛ք, կը կանչէ ծեր մը մուտին ընդմեջէն.
 Խիճերուն ու սիկին մեջ, բահերը՝ խո՛ւ կը հնչեն,
 Ու, դարձուցէ՛ք, դարձուցէ՛ք, կը կոչէ ծայնն անխափան:

Աղջընակ մը, արիշին տակ նստած, շե՛ր կը կանչէ,
 Որ յոգնաբեկ մըշակին օրօրի մը պէս կու գայ.
 Յողը ծըծեց ջուրերուն տարփանքն՝ որ դեռ կը հնչէ,
 Եւ հիմակ՝ թա՛ց՝ կը խոկայ իր երկունքին ապագայ:

8. ԱՍՏՈՒԱԾԱՄԱ՛Ր

*“...Ահա կաթիլ մի կաթին քումի
 կուսութեան յանձն իմ անձրեւեալ...”*

Նարեկացի

Կաթնածաղիկ ու կապտերակ գիշերին մեջ,
 Մեղեսիկի փոշի մըշուշն ըլլամ ըսփիւռ,
 Եւ առիգածն արծաթ՝ ջուրին վրայ հոլանի.
 Ու ծա՛յն ըլլամ, ըլլամ ծաղիկ, ըլլամ գեփի՛ւռ՝
 Ամէն իրի հըպիմ փափուկ թեւերով գեջ:
 Ըլլամ ջրվեժ, ըլլամ գետափ մը գեղանի,
 Ըստուե՛րն ըլլամ խնկագունած այգիներուն,
 Կամ գետերու հողմիկ աւաչն, ու գետածայն
 Յովին անցքը՝ երկնասլացիկ կատարներէն:
 Կաթնածաղիկ ու կապտերակ գիշերին մեջ
 Պատկե՛րն ըլլամ սրբազնացած ես համայնին.
 Օղամանեա՛կ մ՛ըլլամ ես թանկ եւ անմարմին.
 Ու շուշփայ մը՝ հաղորդութեանը կաթնածիր.
 Գետէն անդին կանչե՛ս ինծի. Անցի՛ր, անցի՛ր.
 Մեծ դիւթութեան կայծակ մը տաս մըթար հոգւոյս,
 Ա՛հ, չըգայթի՛մ կոհակն ի վար ցընորքներուս.
 Թող համբուրե՛ աչքըս ջահումն աչքերուդ կոյս,
 Ու չըգայթի՛մ կոհակն ի վար ցընորքներուս:
 Ահա՛ մագլիմ պիտի ցաւիս սարակն ի վեր.
 Երազներու սատափ ճամբէն ցրուէ ամպեր.
 Եւ իղծերուս կապոյտին վրայ, վարդ ամպը դուն,